ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1922—1980-ական թվականներ)

Ռ. Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Կիլիկիայի հայ տարագիրները, հավատալով անգլիական և ֆրանսիական իշխանությունների խոստումներին, վերադարձան հայրենիք։ Սակայն, երբ 1921 թ. հոկտեմբերի 20-ին ֆրանսիական կառավարությունը Անկարայի պայմանագրով Կիլիկիան հանձնեց Թուրքիային, տեղի բնակչությունը վերստին բռնեց արտագաղթի ճանապարհը։ 1921 թ. դեկտեմբերից մինչև 1922 թ. հունվարի սկիզբը հայրենիքից ընդմիշտ հեռացավ մոտ 44.800 հայ[1]։ Նրանցից մոտ 40.000-ը Լիբանանի կառավարության համաձայնությամբ բնակություն հաստատեցին Բեյրութում և մյուս քաղաքներում ու շրջաններում։ Լիբանանում մինչ այդ բնակված հայերի հետ նրանց քանակը դարձավ 42.641[2]։ 1923 թ. Բեյրութում բնակվում էին 19.000 հայ[3], որոնք հիմնականում տեղավորվել էին այսպես կոչված վրանաքաղաքներում, որոնք թվով ինն էին։

1922 թ. հայ տարագիրները սկսեցին հիմնադրել իրենց առաջին դպրոցները։ Կյանքի կայունացման հետևանքով 1938—1939 թթ. Բեյրութում արդեն գործում էին 13, մնացած քաղաքներում՝ 15 ազգային դպրոցներ, որոնցում սովորում էին շուրջ 5.000 երեխաներ։ Դպրոցներում դասավանդում էին մոտ 150 ուսուցիչ, իսկ տարեկան բյուջեն կազմում էր 17.000 լիբանանյան ֆունտ[4]։

Լիբանանահայ վարժարանները ընդհանրապես համայնական են, որոնց ղեկավարությունը պատկանում է տարբեր կուսակցություններին և կազմակերպություններին։ Այդ դպրոցների թվին են պատկանում հայ ազգային վարժարանները, որոնք ենթարկվում են առաքելական համայնքին և մեծ մասամբ գտնվում են դաշնակցական կուսակցության հովանավորության տակ, հայ կաթոլիկ և հայ ավետարանական, Հայկական բարեգործական ընդհանուր միության վարժարանները։ Որոշ դպրոցներ միևնույն ժամանակ գտնվում են ռամկավար-ազատական և հնչակյան կուսակցությունների խնամակալության ներքո։ Գոյություն ունեն առանձին անհատներին պատկանող դպրոցներ։

Լիբանանի հայ ազգային վարժարանները բնույթով ծխական են, այսինքն, յուրաքանչյուր ազգային վարժարան սկզբունքորեն կապված է հայ առաքելական եկեղեցու թեմի հետ և գտնվում է նրա հովանավորության տակ։ Ուսումնադաստիարակչական հարցերում ազգային վարժարանները ենթակա են թեմական ուսումնական խորհրդին։ Ուսումնական խորհրդի պարտականությունների մեջ է մտնում դպրոցների համար կանոնագրերի և ծրագրերի կազմումը ու դրանց գործադրումը, այդ ծրագրերին համապատասխան դասագրքերի հրատարակումը։ Կրթական գործերում այդ խորհուրդն անմիջական կապ է պահպանում թաղական խորհուրդների, վարժարանների հոգաբարձությունների հետ։ Վարժարանները կրթադաստիարակչական հարցերով համապատասխանաբար ենթարկվում են իրենց համայնքներում գործող

---

1 Р. Саакян, Франко-турецкие отношения и Киликия, 1918—1923г., Ереван, 1986, с. 169.

2 Հ. Թոփուզյան, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1996, էջ 169։

3 Ս. Վարժապետյան, Հայերը Լիբանանի մեջ, հ. 2, Բեյրութ, 1981, էջ 87։

4 Հայրենիք, 8. IX. 1938, Ազդակ, 13. X. 1938։

միություններին և կուսակցություններին։ Լիբանանի բոլոր հայկական դպրոցներում գործադրվում է Լիբանանի պետական կրթական ծրագիրը, իսկ քննությունները համապատասխանում են Լիբանանի պետական քննություններին։ Պետական ծրագրին զուգահեռ վարժարաններում անցնում են հայոց լեզու և հայագիտական առարկաներ, աշխատում են երեխաներին տալ հայեցի դաստիարակություն։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Լիբանանի հայկական դպրոցները վերելք ապրեցին։ Անընդհատ ավելանում էր սովորողների քանակը, և համայնքները բավական խոշոր գումար էին հատկացնում դրանց տարեցտարի աճող բյուջեն ծածկելու համար, որը 1950—1951 կրթական տարեշրջանում կազմում էր 800.000 լ. ֆ. (առաքելական համայնք—44,8 %, կաթոլիկ—26 %, ավետարանական—26,2 %, անհատական—5 %)[5]։ Այս ուսումնական տարում Լիբանանում գործում էին 53 հայկական դպրոց, որտեղ սովորում էին 12.237 աշակերտ։ Հայ ազգային վարժարանները կազմում էին ընդհանուր թվի 52,8 %-ը, իսկ դրանցում սովորող աշակերտությունը՝ 55,5 %, ավետարանականներինը՝ 22,2 %, կաթոլիկներինը՝ 31,2 %, անհատականը՝ 1 %[6]։

1965 թ. լիբանանահայ ուսումնական խորհուրդը պատրաստեց և հրատարակեց նոր ուսումնական կանոնագիր-ծրագիր, որը հնարավորություն տվեց ազգային վարժարանները բարձրացնել ժամանակակից դպրոցի մակարդակին և հայ երեխաներին տալ այնպիսի կրթություն ու դաստիարակություն, որ նրանք, պահպանելով իրենց ազգային ինքնագիտակցությունը, պատրաստ լինեն նաև որպես Լիբանանի քաղաքացիներ գործունեություն ծավալելու այդ երկրում։ Սրա հետևանքը եղավ այն, որ հայ ընտանիքները սկսեցին ավելի շատ իրենց երեխաներին տալ հայկական վարժարաններ։ Դրա մասին է խոսում այն փաստը, որ 1960-ական թվականների վերջին և 1970-ական թվականների սկզբին, երբ Լիբանանում ընակվում էին մոտ 260—280 հազար հայ, այնտեղ գործում էին 68 կրթական հաստատություն, որոնցից 21-ը ազգային վարժարաններ էին, 15-ը՝ հայ ավետարանական, 12-ը՝ հայ կաթոլիկ, 19-ը՝ անհատական[7]։ Նշված 21 ազգային վարժարաններից մեկը զուտ երկրորդական էր, երկուսը՝ բոլոր կարգերով (այսինքն, ունեին մանկապարտեզ, նախակրթարան, միջնակարգ և երկրորդական բաժիններ), մեկը՝ միջնակարգ և մնացածը՝ նախակրթարան։ Այստեղ սովորում էին 5796 աշակերտ, դասավանդում՝ 318 ուսուցիչ, բյուջեն կազմում էր 1.372.165 լ. ֆ.[8]։

Հայ ավետարանական համայնքին պատկանող 15 ուսումնական հաստատություններից երկուսը կոլեջ էին, երեքը՝ բարձրագույն երկրորդական, երկուսը՝ երկրորդական, մնացածը՝ նախակրթարան։ Այստեղ սովորում էին մոտ 3092 աշակերտ, դասավանդում 224 ուսուցիչ, բյուջեն կազմում էր մոտավորապես 842.000 լ. ֆ.[9]։ Հայ կաթոլիկ վարժարաններից երկուսը ճեմարան էին, երկուսը՝ երկրորդական, մնացածը՝ նախակրթարան։ Նրանցում սովորում էին մոտ 2945 աշակերտ, դասավանդում՝ 179 ուսուցիչ, իսկ բյուջեն կազմում էր 702.000 լ. ֆ.[10]։

1975 թ. Լիբանանում սկսվեցին քաղաքացիական կռիվները, որոնք մեծ հարված հասցրին նաև լիբանանահայ կրթական գործին։ Պատերազմի պատճառով ծայր առավ հայերի արտագաղթը։ Արտագաղթի (մինչև 1985 թ. Լի-

---

5 Զարթոնք, 11. IX. 1951։

6 Նույն տեղում։

7 Հայ Ավետարանական կոլեջ, Լիբանանահայ մշակույթի շաբաթ, Բեյրութ, 1970, էջ 12—13։

8 Լիբանանահայ ազգային վարժարաններ, հրատարակություն ուսումնական խորհրդի, «Կանաչ Կիրակիի» առթիվ, 25. IV. 1971, Բեյրութ, 1971, էջ 6, 19։

9 Ս. Վարժապետյան, նշվ. աշխ., էջ 425—427։

10 Նույն տեղում, էջ 423—424։

բանից գաղթեց այնտեղ բնակվող հայերի 50 %-ը) և ֆինանսական դրության բարդացման հետևանքով սկզբնական ժամանակաշրջանում փակվեցին բավականին շատ դպրոցներ։ Սակայն հետագայում իրավիճակը վարժարաններում ինչ-որ չափով կարգավորվեց, և չնայած ծանր պայմաններին, 1985 թ. առ այսօր այնտեղ գործում են 46 հայկական դպրոց։ Դրանցից 17-ը ազգային վարժարաններ են, 13-ը՝ հայ կաթոլիկ, 8-ը՝ հայ ավետարանական, 8-ը՝ տարբեր միությունների վարժարաններ, որոնցից հինգը պատկանում են ՀԲԸ միությանը[11]։ Հայկական բոլոր վարժարանների թիվը կրճատվել է 32,4 %-ով, ազգայիններինը՝ 19, ավետարանականներինը՝ 56,7, անհատականներինը՝ 58, իսկ կաթոլիկ համայնքի դպրոցները մնացել են նույն թվով։ Աշակերտության թիվը 1970 թ. համեմատությամբ պահպանվել է 81,7 %-ով, դասավանդող ուսուցիչներից մնացել է մոտ 90 %-ը, իսկ բյուջեն, ընդհակառակը, աճել է 40—50 %-ով։ Սակայն պետք է անպայման նկատի ունենալ, որ ֆինանսական միջոցների այսպիսի աճը պատճառաբանված է նաև լիբանանյան ֆունտի ուղղակի աղետալի չափերի հասնող արժեզրկմամբ։

Հետաքրքիր է, որ հայկական վարժարանները կարողացել են պահպանել ոչ միայն իրենց թվական առավելությունը, այլ նաև վերջին տարիների ընթացքում բարձրացրել են ուսումնական մակարդակը։ Որոշ նախակրթարաններ դարձել են երկրորդական վարժարաններ։ Օրինակ՝ Գալուստ Կյուլպենկյան երկրորդական վարժարանը, Սահակյան-Լ. Մկրտչյան կոլեջը։ Ընդլայնվել է նաև մասնագիտական ճյուղավորումը, այսպես՝ Լևոն և Սոֆյա Հակոբյան կոլեջում բացվել է արվեստի և արհեստի բաժին։ Այստեղ աշակերտներին, բացի հիմնական գիտելիքներից, դասավանդում են նաև առևտրական առարկաներ, տրվում է, այսպես կոչված, գրասենյակային ուսում, սովորեցնում են աշխատել կոմպյուտերներով։ Շրջանավարտները ստանում են համապատասխան վկայականներ։

Զգալի փոփոխություններ են կատարվել նաև հայկական վարժարաններում դասավանդող ուսուցիչների կրթական մակարդակում։ Այսպես, եթե 1970—71 ուսումնական տարեշրջանում դասավանդող ուսուցիչների 14,8 %-ը ուներ համալսարանական կրթություն, 16,4 %-ը՝ պետական բաքալորեայի, 15 %-ը՝ պետական պրըվեի, 25,1 %-ը՝ երկրորդական վարժարանի, իսկ 28,5 %-ը՝ միջնակարգի և նախակրթարանի վկայականներ, ապա այժմ 27 %-ը ավարտել է համալսարան, 21,7 %-ը բաքալորեայի վկայական ուներ, 12,6 %-ը՝ պրըվեի, 28,5 %-ը՝ երկրորդական վարժարանի և միայն 16,4 %-ը՝ միջնակարգի և նախակրթարանի[12]։

Վերջին տարիների ընթացքում ուսումնական խորհրդի կողմից բազմաթիվ միջոցառումներ են կատարվել վարժարանների վիճակը կարգավորելու, աշակերտների թիվը ավելացնելու, կրթական մակարդակը բարձրացնելու, հայեցի դաստիարակությունը ամրապնդելու և տնտեսական վիճակը բարելավելու նպատակով։ Տեղի է ունեցել կրթական համագումար (1987), բարձրացվել է դասագրքերի մակարդակը, կատարվել են ուսուցիչների վերապատրաստավորման աշխատանքներ, ձեռնարկվել են նոր մանկապատանեկան հրատարակություններ, կատարելագործվել են հայոց լեզվի և հայագիտական առարկաների դասավանդման մեթոդները, հրատարակվել է հայոց լեզվի նոր դասագիրք, վարժարան առ վարժարան քննվել են բյուջեները։

---

11 Արարատ, 20. VI. 1948, Ափիան, Բեյրութ, 1987, էջ 47, Ազդակ, 15. IX. 1988։ 1987—88 թթ. վերաբերող տվյալների մեծամասնությունը ստացել ենք Լիբանանի հայկական վարժարաններին ուղարկված հարցարանների միջոցով։

12 Լիբանանահայ ազգային վարժարաններ, էջ 10, Ս. Վարժապետյան, նշվ. աշխ., էջ 416—419, 421—427, Ազդակ, 15. XI. 1973, Ջանասեր, 1—15. VI. 1971, Հայ Ավետարանական Կոլեջի «Գառնի» ամսաթերթ, V, 1974, Ազդակ, 23. XII. 1973, Տեղեկատու Լիբանանի ազգային առաջնորդարանի, Ա տարի, Բեյրութ, 1984, էջ 20, Սիփան, էջ 47, Ցոլքեր, Բեյրութ, 1987, էջ 69, Արարատ, 16. X. 1988, նաև՝ նշված հարցարանը։

Այսպիսով, լիբանանահայ համայնքը իր գոյության ընթացքում կրթադաստիարակչական հիմնարկների մի ընդարձակ ցանցի տեր դարձավ, որոնք միայն իրենց ներքին կազմակերպությամբ, ուսումնական մակարդակով, ուսուցչական կազմով և աշակերտության թվով խոսում են լիբանանահայության կրթասիրության և կենսունակության մասին։ Չնայած պատերազմին, հայ կրթական հաստատությունները շարունակում են իրենց ակտիվ գործունեությունը։ Ստեղծված քաղաքական և տնտեսական բարդ իրադրությունը համայնքին չէր խանգարում մնալ որպես ազգապահպան կենտրոն՝ սփյուռքում։ Դրա մասին խոսում է թեկուզ այն փաստը, որ սփյուռքահայ ուրիշ ոչ մի համայնքում այնքան հայկական դպրոց չի գործում, որքան Լիբանանում։ ԱՄՆ-ում դրանք 22-ն են, Սիրիայում՝ մոտ 20-ը, Ավստրալիայում՝ 2-ը, Ֆրանսիայում՝ 4-ը, իսկ Լիբանանում, ինչպես նշվեց՝ 46-ը։

Լիբանանի հայկական դպրոցները աչքի են ընկնում ոչ միայն իրենց ուսումնական բարձր մակարդակով, այլև կարևոր դեր են խաղում սերունդներին ազգային ոգով դաստիարակելու գործում։ Այդ խնդրի իրականացման համար բազմաթիվ մեթոդներ և ձևեր են կիրառվում։ Դպրոցների կրթական կանոնագրի այն մասում, որտեղ թվարկվում են աշակերտների պարտականությունները, նրանցից առաջին հերթին պահանջվում է սիրել ազգը, եկեղեցին և մայրենի լեզուն. «Ամեն աշակերտ պարտավոր է հայերեն խոսել դպրոցում, տանը և ամեն տեղ»[13]։

Դպրոցներում հիմնական շեշտը դրված է հայոց լեզվի և հայագիտական առարկաների վրա։ Մանկապարտեզի «Ծաղիկ» դասարանում կրոնի հետ միաժամանակ սկսում են անցնել հայերեն այբուբենը։ Այնպես, որ փոխադրվելով առաջին դասարան, երեխաներն արդեն կարդալ և գրել գիտեն։ Տարվա ընթացքում հայոց լեզվին տրամադրված է շաբաթական 7—10 ժամ, ընդ որում վեցերորդ դասարանից սկսած զուգահեռաբար դասավանդվում է նաև գրաբար։ Առաջին դասարանից սկսում են անցնել նաև հայ ժողովրդի պատմություն. առաջին-երրորդ դասարանում՝ շաբաթական 2 ժամ, չորրորդ դասարանից (քանի որ սկսվում է նաև ընդհանուր պատմության դասավանդումը)՝ շաբաթական մեկ ժամ։ Հայագիտական առարկաներից դասավանդում են նաև Հայաստանի աշխարհագրություն, հայ գրականություն, մատենագիտություն։ Բացի այդ, առաջին դասարանից հիմնականում հայերենով, իսկ հետագայում արաբերենով և անգլերենով (կամ ֆրանսերենով) անցնում են նաև մաթեմատիկական առարկաներ։ Այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Լիբանանի հայկական բոլոր դպրոցներում կիրառվում է Լիբանանի պետական կրթական ծրագիրը, որն ինքնին բավական ծանր է, և դրան զուգահեռ հայոց լեզվի ու հայագիտական առարկաների դասավանդումը բավական դժվար է ուսուցիչների և հատկապես աշակերտության համար։ Սակայն, չնայած այդ դժվարություններին, հայկական ծրագիրը կիրառվում էր և շարունակում է կիրառվել համարյա բոլոր դպրոցներում։

Բացի վերը նշված կրթական ծրագրից, վարժարաններում անցկացվում են զանազան մշակութային միջոցառումներ, որոնք կոչված են պահպանելու հայերի, հատկապես աճող սերնդի, ազգային նկարագիրը։ Այսպես՝ անցկացվում են դասախոսություններ հայագիտական թեմաներով, տարբեր մրցույթներ հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության վերաբերյալ, ատենամարզանքի ժամեր (երբ աշակերտների ուժերով կազմակերպվում են վիճաբանական ժողովներ, համերգներ կամ փոքր բեմադրություններ), ֆիլմերի դիտում, հանդիպումներ Խորհրդային Հայաստանից ժամանած հյուրերի հետ, ճանապարհորդություններ դեպի Հայաստան, նշվում են հայկական տոներ և այլն։ Ատենամարզանքի ժամերին, որոնք տեղի են ունենում ամեն շաբաթ, համերգային ծրագրի մեծ մասը տրամադրվում է հայ երգին, պարին, ար-

---

13 Կազմական և ներքին կանոնագիր Կիլիկիո կաթողիկոսության թեմերու ազգային վարժարաններու, Անթիլիաս, 1947, էջ 8, Կանոնագիր Լիբանանի ազգային վարժարանաց, Բեյրութ, 1946, էջ 19։

մունքին և հայկական պիեսների բեմադրությանը։ Այսպիսով, տեսնում ենք, որ Լիբանանի հայկական դպրոցներում օգտագործվում են համարյա բոլոր ձևերն ու մեթոդները՝ լիբանանահայ նոր սերնդի հայեցի կրթության և դաստիարակության համար։

Սփյուռքահայ դպրոցը հայապահպանման ամենակարևոր օջախներից մեկն է։ Ուստի պատահական չէ, որ Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի, ՀԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության և հանրապետության պետական այլ մարմինների ուշադրության կենտրոնում են արտասահմանի հայկական դպրոցները, մատաղ սերնդի կրթության և հայրենասիրական ոգով դաստիարակության հարցերը։ Հատկապես վերջին քսանամյակում Մայր հայրենիքը սփյուռքահայ դպրոցների համար կազմակերպել է մեծ և անընդհատ օգնություն։ Այդ տարիների ընթացքում նրանց համար պատրաստվել, հրատարակվել և անվճար ուղարկվել է 12 անուն ավելի քան 300.000 դասագիրք[14]։ 1962 թ. սկսած տարեկան մինչև 50 սփյուռքահայ ուսուցիչների համար հայրենիքում կազմակերպվում են վերապատրաստման ու որակավորման երկամյա դասընթացներ։ Այդ նույն ժամանակամիջոցում ավելի քան 2.000 սփյուռքահայ երեխաներ իրենց ամառային հանգիստն են անցկացրել Հայաստանի պիոներական ճամբարներում և մանկական առողջարաններում[15]։

Լիբանանի հայ համայնքը ևս բնականաբար օգտվում է այս հնարավորություններից։ Իսկ վերջին տարիներին Լիբանանում ստեղծված քաղաքական և տնտեսական ծանր իրավիճակից ելնելով Խորհրդային Հայաստանի կառավարությունը և Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն մեծ ուշադրություն են դարձնում հատկապես լիբանանահայ վարժարաններին։ Այսպես՝ 1988 թ. կազմակերպվել է մոտ 350.000 ռուբլու օգնություն[16]։ Դպրոցների և մանկապարտեզների համար ուղարկվել են անհրաժեշտ իրեր՝ սկսած խաղալիքներից և երաժշտական գործիքներից և վերջացրած ֆիզիկայի, քիմիայի ու կենսաբանության լաբորատորիաների համար գույքով, առողջապահական-սպորտային համալիրներով և այլն։ Բացի դրանից պարբերաբար ուղարկվում են դասագրքեր, գրենական պիտույք, գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր՝ Հայաստանի տեսարժան վայրերի և հայ մեծանուն մարդկանց մասին։ Հայրենի երկիրն ամեն հնարավոր միջոցներով նպաստում է սփյուռքահայ և այդ թվում լիբանանահայ դպրոցների ակտիվ գործունեությանը և աշխատում այդ ճանապարհով սփյուռքահայ երիտասարդությանը կապել Խորհրդային Հայաստանի իրականության հետ։

Ինչպես իր դարավոր պատմության ընթացքում, այնպես էլ ժամանակակից փուլում, հայ դպրոցը բացառիկ կարևոր դեր է կատարում հայ ժողովրդի գոյատևման, մասնավորապես սփյուռքահայությանը սպառնացող ձուլման և ուծացման դեմ մղվող պայքարում, քանի որ հայ դպրոցն ու դաստիարակությունը մի հզոր ուժ են հայոց լեզուն, գրականությունը, դարավոր մշակույթը, ազգային դեմքը պահպանելու համար։

АРМЯНСКИЕ УЧЕБНЫЕ ЗАВЕДЕНИЯ В ЛИВАНЕ
(1922—1980-ые годы)

Р. Г. САРКИСЯН

Резюме

На современном этапе, как и на протяжении своей вековой истории, армянская школа играет исключительную роль в борьбе армянской диаспоры против ассимиляции за сохранение этнического са-

[14] Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985, էջ 391։

[15] Նույն տեղում, էջ 392։

[16] Ջաթոնը, 22. IX. 1988։

мосознания. Армянские школы Ливана выделяются и своим числом, и высоким учебно-образовательным уровнем, и особенно системой армянского национального образования и воспитания.

Первые армянские школы в Ливане были основаны в 1922 г. Из года в год их число увеличивалось. В 1939 г. здесь действовало 28 армянских школ, в 1950 г.—53, в 1970 г.—68.

Продолжающаяся уже почти 15 лет гражданская война в Ливане нанесла ощутимый удар по довольно разветвленной системе учебных заведений страны. Ныне здесь действуют 46 школ. Однако в целом армянские школы Ливана даже в столь сложной политической и экономической ситуации сохраняют свое и количественное, и качественное преимущество перед школами армянских общин других стран.

ARMENIAN EDUCATIONAL ESTABLISHMENTS IN LEBANON (1922—1980-s)

R. G. SARGSIAN

S u m m a r y

Both in the present period and during its century-long history, the Armenian school has played an outstanding role in the struggle of the Armenian Diaspora against assimilation for the preservation of ethnic awareness. The Armenian schools of Lebanon are distinguished both by their number and a high educational standard, the system of the Armenian national learning and education.

The first Armenian schools in Lebanon were founded in 1922. Their number kept increasing each year. By 1939 there were 28 Armenian schools, their number steadily going up to 53 in 1950 and 68 in 1970.

The civil war that has been raging in Lebanon for nearly 15 years has dealt a severe blow on a fairly widespread system of the country's educational establishments. Now 46 schools are functioning here. However, as a whole, the Armenian schoolsof Lebanon even in such a complicated political and economic situation have preserved both their quantitative and qualitative advantages over the schools of Armenian communities in other countries.